Պայմանագիր №

Construction.am վեբ-կայքում Գովազդային ծառայության մատուցման

ք. Երևան *Թարմացված է 23.03.2026թ.*

«Կամֆի» ՍՊԸ՝ (հետագայում Կատարող) ի դեմս տնօրեն Վարդան Մինասյանի և «.....»՝ (հետագայում Պատվիրատու) ի դեմս տնօրեն «.....», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել գովազդային ծառայություն (այսուհետ **Ծառայություն)** *Construction.am* վեբ-կայքում (այսուհետ **Կայք**), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց:

1.2 Ծառայությունը կմատուցվի «.....» չափսի գովազդային բաների տեղադրման միջոցով, որը կցուցադրվի Կայքի «.....» էջերում՝ ընդհանուր «.....» դիտումների քանակով, «.....» հատվածում:

1.3 Բաները տրամադրում է Պատվիրատուն կամ պատրաստում է Կատարողը առանձին պայմանագրի կնքման միջոցով: Պատվիրատուի կողմից տրամադրված Բաների բովանդակությունը պետք է լինի հավաստի և համապատասխանի ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչի համար լրիվ պատասխանատվություն է կրում Պատվիրատուն:

1.4 Ծառայության մատուցման ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է բաների տեղադրման օրվանից և ավարտվում է «.....» փաստացի դիտումների լրանալուն պես: Տեղադրման օրվա մասին տեղեկությունը Կատարողը հայտնում է Պատվիրատուին էլեկտրոնային փոստի միջոցով նրա պաշտոնական կամ հանրային հրապարակված էլեկտրոնային փոստի հասցեին:

1.5 Կատարողի կողմից Ծառայության մատուցման ժամանակավոր դադարի դեպքում (կետ 5.1 կամ այլ), Պայմանագրի գործողությունը, ըստ երկկողմ համաձայնության, կարող է երկարաձգվել այդ դադարից հետո այնքան ժամանակ, մինչև Պայմանագրով համաձայնեցված դիտումների քանակի լրանալը:

2. Պայմանագրի գինը, վճարման ժամկետները և կատարումը

2.1 Ծառայության մատուցման գինը կազմում է «.....» **ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ:

2.2 Ծառայության մատուցման գումարը պետք է վճարվի հետևյալ կարգով՝ կանխավճար «.....» ՀՀ դրամ, որից հետո կտեղադրվի գովազդ Բաները կայքում: Հետագա վճարումները պետք է իրականացվեն «.....» դիտումների լրանալուց հետո դուրս գրված Հարկային հաշիվների դիմաց: Վճարված կանխավճարը՝ «.....» ՀՀ դրամը, Պատվիրատուն կարող է միայն նվազեցնել վերջին դուրս գրված հարկային հաշվի վճարվելիք գումարից:

2.3 Կողմերի կամքից անկախ ծագած իրավիճակներում, երբ պայմանագրի կատարումը դառնում է անհնար, Պատվիրատուն վճարում է միայն փաստացի մատուցած Ծառայության համար, Կատարողի կողմից դիտումների փաստացի հաշվարկի հիման վրա դուրս գրված հարկային հաշվի դիմաց:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Կատարողի իրավունքներն ու պարտականությունները

3.1.1 Կատարողը պարտավորվում է ապահովել Կայքի անխափան գործունեությունը և անվտանգությունը, ինչպես նաև կատարել դրա գործունեության հետ կապված բոլոր դրամական ծախսերը:

3.1.2 Սույն պայմանագրի ժամկետի ավարտից 1 ամիս առաջ Կատարողը պարտավորվում է, ըստ Պատվիրատուի ցանկության, ներկայացնել նոր պայմանագրի կնքման առաջարկ: Գնային քաղաքականությունը հաջորդ պայմանագրի կնքման ժամանակ կարող է փոփոխված լինել:

3.1.3 Կատարողը պարտավորվում է դուրս գրել Ծառայության կատարման Հարկային հաշիվ, յուրաքանչյուր «.....» դիտումների ավարտին:

3.1.4 Կատարողը պարտավորվում է վերադարձնել կանխավճարային գումարը, եթե Ծառայության մատուցումը վաղաժամկետ դադարել է իր մեղքով և կողմերը համաձայնության են եկել մատուցված Ծառայության ծավալի շուրջ համաձայն 2.3 կետի:

3.2 Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները

3.2.1 Պատվիրատուն, ցանկության դեպքում, իրավունք ունի փոխել տեղադրված գովազդային բանները և տրամադրել նորը: Նոր ներկայացված Բաները Կատարողը պարտավորվում է փոխարինել 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2.2 Պատվիրատուն պարտավորվում է հաստատել Կատարողի կողմից 3.1.3 կետի համաձայն դուրս գրված Հարկային հաշիվները և վճարել դրանց դիմաց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

4.1 Պայմանագիրը կարող է լուծվել Պատվիրատուի նախաձեռնությամբ առանց տույժի, նախապես՝ 1 ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Կատարողին: Նամակը պետք ուղարկվի, ստորագրված և կնքված, էլեկտրոնային հասցեին: Եթե Պատվիրատուն ցանկանում է լուծել Պայմանագիրը անհապաղ, ապա նա պարտավորվում է Կատարողին փոխհատուցել տույժ՝ «.....» ՀՀ դրամի չափով (2.2. կետի համաձայն վճարված կանխավճարի գումարը):

4.2 Պայմանագրի 5-րդ կետի կիրառման դեպքում՝ Կողմերի կամքից անկախ ծագած իրավիճակներում, երբ Ծառայության մատուցումը դառնում է անհնար, երկկողմ հարաբերությունները կարգավորվում են 2.3 կետի կարգով:

5. Այլ Դրույթներ

5.1 Անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով (Ֆորս-Մաժոր)՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ամբողջությամբ կամ ժամանակավորապես անհնարինության դեպքում, կողմերն ազատվում են պատասխանատվությունից: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլ անկանխատեսելի իրավիճակները, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացումը: Այս կետը վերաբերում է Երևան քաղաքին և Հայաստանին («Կամֆի» ՍՊԸ-ի գործունեության մասով) և հոսթինքի տրամադրման մասով՝ ԱՄՆ-ի Միչիգան նահանգում գրանցված A2 Hosting, Inc.-ի սերվերի տարածաշրջանին: Պայմանագրով չկարգավորվող իրավահարաբերությունները կամ ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով, դատական կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ ընդունված այլ ձևերով:

5.2 Կատարողը ոչ մի պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից երրորդ կողմին հասցրած որևէ վնասի համար, ինչը կարող է առաջանալ նրա կողմից էջի օգտագործման կամ հիմնական գործունեության ծավալման արդյունքում:

5.3 Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու՝

Կատարող՝

«Կամֆի» ՍՊԸ
ք. Երևան, Մաշտոցի պ. 18-6ա
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/հ 220493330827000
ՀՎՀՀ 02541064

Տնօրեն՝
Վ. Մինասյան

_____